

**Հետաքրքրության հայտ ներկայացնելու հրավեր
(Խորհրդատվական ծառայություններ-կազմակերպության ընտրություն)**

Երկիր՝ Հայաստանի Հանրապետություն

Ծրագրի անվանումը՝ «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում»

Պայմանագրի անվանումը՝ «Վայոց ձորի մարզային հիվանդանոցի կառուցման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն»

Ծրագիր No.: P175023

Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝ CR5/AF/CQS/B-C/001-21

1. Հայաստանի Հանրապետությունը դիմել է Համաշխարհային բանկին՝ **«Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» ծրագրի** ծախսերը հոգալու համար և մտադիր է միջոցների մի մասն օգտագործել խորհրդատվական ծառայությունների իրականացման համար՝ **«Վայոց ձորի մարզային հիվանդանոցի կառուցման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն»**, CR5/AF/CQS/B-C/001-21:

2. Խորհրդատվական ծառայությունները ներառում են:
Խորհրդատուն պետք է վերահսկի աշխատանքների իրականացման ամբողջ ընթացքը մինչև վերջիններիս ամբողջական ավարտը և Պատվիրատուի կողմից Ծրագրի վերջնական ընդունումը: Բոլոր իրականացրած աշխատանքները պետք է համապատասխանեն ճարտարապետական և ինժեներական նախագծերին և տեխնիկական մասնագրերին, շինարարական աշխատանքների համապատասխանությունը շինարարության տեղական օրենքներին, գործող նորմերին և ստանդարտներին, կանոններին և կարգավորումներին, ինչպես նաև Խորհրդատուն պետք է վերահսկի բնապահպանական խնդիրներին ներկայացվող պահանջների ապահովումը: Աշխատանքների ավելի մանրամասն նկարագիրը և այլ պայմանները ներկայացված են կից՝ տեխնիկական առաջադրանք բաժնում: Աշխատանքների իրականացման ակնկալվող ժամանակահատվածը քսանչորս (24) ամիս է:

3. Սույնով ՀՀ Առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը («Պատվիրատու») հրավիրում է իրավասու խորհրդատվական կազմակերպություններին («Խորհրդատուներ») ներկայացնել հետաքրքրության հայտը վերոնշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ: Նշված ծառայությունները տրամադրելու նպատակով շահագրգիռ Խորհրդատուները պետք է ներկայացնեն տեղեկատվություն պահանջվող որակավորման և համապատասխան փորձի վերաբերյալ (կազմակերպության մասին տեղեկատվություն, նմանատիպ ծառայությունների տրամադրման փորձ, նկարագրություն, ծառայությունների տրամադրման հնարավորություն, բրոշյուրներ և այլն):

4. **Կարճ ցուցակի կազմման չափանիշներն են՝**

- Խորհրդատուի ընդհանուր աշխատանքային փորձը շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ոլորտում վերջին 5 տարիների ընթացքում;

- Վերջին 5 տարիների ընթացքում նմանատիպ պայմանագրերի իրականացում, որոնց շրջանակներում կազմակերպությունը իրականացրել է (բարեհաջող ավարտված)

ընդհանուր ծավալով (առավելագույնը 2 պայմանագիր) առնվազն 4000քմ մակերեսով հասարակական և բնակելի նշանակության շենքերի վերակառուցման և/կամ կառուցման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն:

Հիմնական փորձագետների աշխատանքային ինքնակենսագրությունները չի ներկայացվում, քանի որ դրանք տվյալ փուլում չեն գնահատվում:

5. Խորհրդատու ընկերությունների ուշադրությունն ենք հրավիրում Համաշխարհային բանկի՝ **«Համաշխարհային Բանկի գնումների կանոնակարգեր ՆՄՖ փոխառուների համար/ «World Bank Procurement Regulations for IPF Borrowers» [հուլիս 2016թ., վերանայված նոյեմբեր 2017 և օգոստոս 2018]** («Գնումների կանոնակարգեր»), III-րդ Բաժնի 3.14, 3.16 և 3.17 կետերի վրա, որով սահմանվում է Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

6. Խորհրդատու ընկերությունները կարող են համագործակցել միմյանց հետ՝ իրենց որակավորումը բարձրացնելու նպատակով: Այս դեպքում անհրաժեշտ է հստակ նշել համագործակցության ձևը՝ **Համատեղ ձեռնարկություն (ՀՁ) և/կամ ենթախորհրդատու:** Պայմանագրի ողջ իրականացման ընթացքում Համատեղ ձեռնարկության բոլոր անդամները համապարտ պատասխանատվություն են կրում, եթե վերջիններս ընտրվեն:

7. Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի Համաշխարհային բանկի՝ **Համաշխարհային Բանկի գնումների կանոնակարգեր ՆՄՖ փոխառուների համար/ «World Bank Procurement Regulations for IPF Borrowers» [հուլիս 2016թ., վերանայված նոյեմբեր 2017 և օգոստոս 2018]** («Գնումների կանոնակարգեր») 7.11 կետում սահմանված «Կազմակերպության որակավորման վրա հիմնված ընտրություն» (CQS) ընթացակարգին համաձայն:

8. Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ստորև նշված հասցեով աշխատանքային օրերին՝ 09:00-ից մինչև 18:00 ընկած ժամանակահատվածում:

9. Հետաքրքրության հայտը պետք է ներկայացվի **Հայերեն** լեզվով, էլեկտրոնային **Adobe PDF և Word** տարբերակներով՝ ստորև նշված հասցեով, ոչ ուշ քան **2021թ-ի Մարտի 15-ը**: Հետաքրքրության հայտում պետք է հստակ նշված լինի **«Վայոց ձորի մարզային հիվանդանոցի կառուցման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն»**, **CR5/AF/CQS/B-C/001-21**:

ՀՀ ԱՆ «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ Երվանդ Էլիբեկյան, Տնօրեն

Կոմիտասի 49/4, ք.Երևան 0051, ՀՀ (5-րդ հարկ)

Հեռ.՝ (+374 10) 29 75 36, (+374 10) 29 75 37

Էլ. հասցե՝ info@healthpiu.am, kristine.ghambaryan@healthpiu.am

Վեբկայք՝ www.healthpiu.am

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Վայոց ձորի մարզային հիվանդանոցի կառուցման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն», CR5/AF/CQS/B-C/001-21

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ) դիմել է Համաշխարհային Բանկի (ՀԲ) «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում, լրացուցիչ ֆինանսավորում» (P175023) վարկային ծրագիրն իրականացնելու նպատակով: Ծրագրի շրջանակներում նախատեսում է իրականացնել ՀՀ Վայոց Ձորի մարզային հիվանդանոցի նոր շենքի մոդուլային տիպի մեկ հարկանի բազմաֆունկցիոնալ շենքի կառուցում (շուրջ 3800 քմ): Աշխատանքները ներառում են՝ հիվանդանոցի տանիքում ուղղաթիռի վայրէջքի հրապարակի կառուցում, բժշկական վերելակի տեղադրում, կաթսայատան կառուցում և դիզելային գեներատորի տեղադրում, էլեկտրական ենթակայանի կառուցում, արտաքին ինժեներական ցանցերի և կառույցների ներդրում, ներքին ինժեներական ենթակառուցվածքների մոնտաժում և տարածքի բարեկարգում:

Ծրագրի արդյունավետ, որակով և ժամանակին իրականացման նպատակով՝ Առողջապահության նախարարության (ԱՆ) «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը (ՊՀ) նախատեսում է ընտրել Խորհրդատու, որը կիրականացնի Վայոց Ձորի մարզային հիվանդանոցի նոր կառուցվող շենքի բոլոր շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողությունը:

Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի «Համաշխարհային Բանկի գնումների կանոնակարգեր ՆԾՖ փոխառուների համար/ «Procurement Regulations for IPF Borrowers» [հուլիս 2016թ., վերանայված նոյեմբեր 2017 և օգոստոս 2018] սահմանված «Կազմակերպության որակավորման վրա հիմնված ընտրություն» (CQS) ընթացակարգին համաձայն:

Խորհրդատուի հետ կկնքվի «Ժամանակի հիման վրա վճարումներ» պայմանագիրը:

1. ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

1.1 Տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի ՀՀ քաղաքաշինության նախարարության 28.04.1998թ. N44 «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ»-ի հիման վրա:

1.2 Տեխնիկական հսկողության նպատակներն են ապահովել.

- իրականացվող շինարարական աշխատանքների համապատասխանությունը ճարտարապետաինժեներական նախագծերին և տեխնիկական մասնագրերին, ինչպես նաև համապատասխանության փաստաթղթային ձևակերպումը,
- բոլոր աշխատանքների իրականացումը համաձայն շինարարության, բնապահպանական և աշխատանքային անվտանգության ոլորտները կարգավորող տեղական օրենսդրության պահանջների:

2. ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2.1.1 Տեխնիկական հսկողության պայմանագիրը ստորագրելուց և Մեկնարկի նամակը ստանալուց հետո, 5 օրվա ընթացքում, հաղթող ճանաչված Խորհրդատուն պետք է տեղակայվի շինհրապարակում: Տեխնիկական հսկողության աշխատանքները կմեկնարկեն տեղակայման պահից: Ծրագրի իրականացման ակնկալվող տևողությունը քսանչորս (24) ամիս է: Այդուհանդերձ, Խորհրդատուի պայմանագրային պարտավորությունները կշարունակեն ուժի մեջ մնալ մինչև ավարտված շինարարական աշխատանքների փաստաթղթային ձևակերպման ակտի վավերացումը, հայտնաբերված թերությունների վերացումը, ավարտական ակտերի կազմումը և շինարարության պայմանագրի ավարտը:

2.1.2 Խորհրդատուն պետք է ապահովի իր մշտական ներկայությունը շինհրապարակում՝ աշխատանքային ժամերին ամենօրյա այցելությամբ ի դեմս Խորհրդատվական խմբի անդամ Շինհրապարակի Տեխնիկական Հսկիչի (ՇՏՀ), որը պատասխանատու է շինհրապարակում ընթացող բոլոր գործողությունների շարունակական տեխնիկական հսկողության համար: Ըստ անհրաժեշտության, ՇՏՀ-ը պետք է ներգրավի Խորհրդատվական խմբի անդամ մասնագետներին՝ վերջիններիս մասնագիտական ոլորտին առնչվող տեխնիկական խնդիրների վերաբերյալ Խորհրդատվություն ստանալու նպատակով: ՇՏՀ-ը պետք է արձանագրի շինհրապարակում տեղի ունեցող բոլոր գործընթացները՝ ներառյալ տեխնիկական, օրենսդրական և անվտանգության խնդիրների վերաբերյալ կայացված որոշումները:

2.1.3 ՇՏՀ-ը պետք է պարբերաբար կազմակերպի Հանդիպումներ շինհրապարակում՝ Պատվիրատուի, Խորհրդատուի, նախագծողի (հեղինակային հսկողություն իրականացնող), կապալառուի ու ենթակապալառուների (եթե առկա են) լիազոր ներկայացուցիչների մասնակցությամբ, կազմի Հանդիպումների օրակարգը (անհրաժեշտության դեպքում), ինչպես նաև հանդիպման արձանագրությունը (անհրաժեշտության դեպքում): Խորհրդատուն պետք է պատրաստի և Պատվիրատուին ներկայացնի ամսական ամփոփ հաշվետվություններ, որոնք կարտացույցն հաշվետու ամսվա ընթացքում հայտնաբերված բոլոր խնդիրները և դրանց համաձայնեցված լուծումները: Շինհրապարակում կայացած հանդիպման արձանագրությունը պետք է կցվի ամսական ամփոփ հաշվետվությանը: Խորհրդատուի ամփոփ ամսական հաշվետվությունների հիման վրա Պատվիրատուն կկատարի վճարումներ համաձայն կատարողականի:

2.1.4 Տեխնիկական հսկողությունը պետք է ապահովի, որպեսզի կատարված աշխատանքների որակը, ձեռք բերված նյութերը, կառույցները և իրերը, ինչպես նաև աշխատանքները կատարելու տեխնոլոգիական պահանջները համապատասխանեն ճարտարապետական և ինժեներական նախագծի մասնագրերին ու ծավալաթերթին, գործող կանոններին և կառավարության կողմից սահմանված չափանիշներին, ինչպես նաև Պատվիրատուի կողմից հաստատված շինանյութերի նմուշներին:

2.1.5 Տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի շարունակական ստուգումների միջոցով և գրավոր փաստաթղթավորվի՝ հիմնվելով փորձարկումների արդյունքների, ձեռք բերված ապրանքների տեխնիկական փաստաթղթերի և վկայականների, քանակների չափման և լուսանկարների վրա: Պատվիրատուի հետ Խորհրդակցելով՝ շինհրապարակում Խորհրդատուն պետք է ստուգի և ընդունի շինանյութեր և ձեռք բերված այլ իրեր: Տեխնիկական հսկողությունը պետք է հավաստիանա, որ շինհրապարակում բոլոր

գործողություններն իրականացվում են շինարարության, բնապահպանական և աշխատանքային անվտանգության ոլորտները կարգավորող օրենսդրության շրջանակներում:

2.2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հիմնական դրույթները ներառում են Խորհրդատուի հետևյալ պարտականությունները (որը սակայն չի սահմանափակվում).

2.2.1 Մասնակցել շենքերի և շինությունների առանցքների նշահարմանը, շինարարության ընթացքում ստուգել և չափագրել գեոդեզիական նիշերը:

2.2.2 Պարբերաբար ստուգել բոլոր կատարված շինմոնտաժային աշխատանքների որակն ու տեխնոլոգիական հերթականությունը, նրանց համապատասխանությունը նախագծին, շինարարական նորմերին և կանոններին, հատուկ աշխատանքների տեխնիկական պայմաններին:

2.2.3 Ստուգել շինարարությունում օգտագործվող նյութերի, շինվածքների, կոնստրուկցիաների և ինժեներական սարքավորումների որակը հաստատող սերտիֆիկատների, տեխնիկական անձնագրերի և վերլուծությունների արդյունքների գոյությունը և, նախագծի ու արտադրանքի որակի պահանջներին անհամապատասխանության դեպքում, արգելել դրանց օգտագործումը՝ այն ձևակերպելով համապատասխան ակտերով:

2.2.4 Կապալառուի կողմից վարվող շինարարության ընդհանուր մատյանում նշել նկատողությունները և դիտողությունները, հայտնաբերված թերությունները և դրանց վերացման մասին համապատասխան ժամկետների սահմանման գրառումները:

2.2.5 Մասնակցել հեղինակային հսկողության, պետական քաղաքաշինական հսկողության և այլ լիազորված մարմինների կողմից անցկացվող շինարարության որակի ստուգումներին և հետևել հայտնաբերված թերությունների ժամանակին վերացմանը:

2.2.6 Անավարտ աշխատանքների և զգալի թերությունների հայտնաբերման դեպքում կազմել նրանց ցանկը, սահմանել վերացման ժամկետները և անհապաղ տեղյակ պահել Պատվիրատուին:

2.2.7 Ստորագրել սառեցված (կոնսերվացված) կամ դադարեցված շինարարական օբյեկտների ընդունման ակտը և նրանց հանձնումը Պատվիրատուին:

2.2.8 Մասնակցել ինժեներական կոմունիկացիաների և կառույցների, խողովակաշարերի, էլեկտրասարքավորումների փորձարկումներին, հետևել դրանց համապատասխանությանը նախագծային պայմաններին, ընդունված նորմերին ու ստանդարտներին և ստորագրել համապատասխան փորձարկման ակտեր:

2.2.9 Հետևել որպեսզի շինարարության ընդհանուր մատյանում կանոնավոր կերպով գրանցված լինի օրական կատարված աշխատանքների ընթացքը, շինհրապարակ ներմուծվող կոնստրուկցիաների, իրերի, նյութերի քանակը և այլն, դրանց վերաբերյալ կատարել համապատասխան գրառումներ:

2.2.10 Պատվիրատուի և կապալառուի հետ համատեղ կազմել և վավերացնել ծածկվող աշխատանքների ընդունման ակտերը, դրանք ներկայացնել Պատվիրատուին մինչև համապատասխան կատարողականի վավերացումը:

2.2.11 Վավերացնել կապալառուի կողմից կազմված և վճարման ներկայացվող կատարողական ակտերը, նախապես ստուգելով և մանրամասն չափագրելով կապալառուի կողմից ներկայացված ակտի բոլոր ծավալները: Խորհրդատուն ամբողջությամբ պատասխանատու է կատարողական ակտում բերված աշխատանքների ծավալների իսկության և որակի համար:

2.2.12 Արձանագրել և Պատվիրատուին ներկայացնել պայմանագրային ծավալներից ավել կամ դրանցից դուրս անհրաժեշտ կատարվելիք աշխատանքների ծավալները՝ տալով դրանց կատարման անհրաժեշտության համար մասնագիտական եզրակացություն զեկուցագրի տեսքով:

2.2.13 Հետևել շինարարական աշխատանքների ամբողջ ընթացքում դրանց կատարմանը՝ համաձայն Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի և լրացնել համապատասխան աղյուսակներ, որոնք կտրամադրվեն Պատվիրատուի կողմից: Պատվիրատուին ներկայացնել ամսեկան հաշվետվություն, ներառյալ բնապահպանական և սոցիալական հարցերի մասին հաշվետվությունը:

2.2.14 Հետևել և ստուգել շինարարի կողմից անվտանգության նորմերի ու կանոնների պահպանմանը և դրանց վերաբերյալ տեխնիկական անվտանգության մատյանում օրական գրառումները:

2.2.15 Ստորագրել շինարարության ավարտական ակտերը: Ակտերը չվավերացնելու դեպքում եռօրյա ժամկետում գրավոր ներկայացնել պատճառները:

2.2.16 Պատվիրատուին ներկայացնել սկզբնական հաշվետվություն, ինչպես նաև ամսեկան հաշվետվություններ՝ համաձայն առաջադրանքի 2.1.2-րդ կետի:

2.2.17 Շենքերի և կառույցների կայունությանը և հուսալիությանը սպառնացող թերությունների հայտնաբերման դեպքում անհապաղ տեղյակ պահել Պատվիրատուին:

2.2.18 Չընդունել հաստատված նախագծերի, տեխնիկական պայմանների, շինարարական նորմերի և կանոնների խախտումներով կամ անորակ նյութերով, շինվածքներով կամ կոնստրուկցիաներով կատարված շինարարական-մոնտաժային աշխատանքները:

2.2.19 Խորհրդատուի հետ պայմանագիրը կարող է լուծվել, եթե Խորհրդատուի մասնագետը կամ ներկայացուցիչը շինարարության ընթացքում 3 օրից ավել բացակայեն շինհրապարակում:

Հատուկ պահանջներ

1. Խորհրդատուն շինհրապարակում պետք է տեղադրի առնվազն 2 տեսախցիկ և ապահովի անխափան, մշտական առցանց դիտման հնարավորություն շինարարության ողջ ընթացքում: Տեսախցիկները պետք է տեղադրվեն այնպիսի կետերում, որ տեսանելի լինի ամբողջ շինհրապարակը: Տեսախցիկների տեղադրման և սպասարկման հետ կապված ծախսերը պետք է նեռարվեն Խորհրդատուի գնային առաջարկում՝ որպես փոխհատուցվող ծախսեր: Տեսախցիկների տեխնիկական մինիմալ պարամետրերը պետք է լինեն հետևյալը.

1. Բարձրորակ պատկերների վերարտադրում՝ 8 MP կետայնությամբ (High quality imaging with 8 MP resolution)
2. Անկյան կարգավորում՝ բացվածքը՝ 0°-ից մինչև 360°, թեքությունը՝ 0°-ից մինչև 90°, պտույտը՝ 0°-ից մինչև 360° (Angle Adjustment : Pan: 0° to 360°, tilt: 0° to 90°, rotate: 0° to 360°)
3. Նվազագույն կետայնությունը՝ 1920 × 1080 (Min. Resolution 1920 × 1080)
4. Ուղիղ եթերի ռեժիմով դիտող օգտատեր/հյուրընկալող՝ նվազագույնը 6 օգտատեր (Live watching user/host : min 6 users)
5. Յերեկային/գիշերային փոխարկիչ՝ Յերեկային/Գիշերային/Ավտոմատ/Գրաֆիկով (Day/Night Switch : Day/Night/Auto/Schedule)
6. Մեկնարկի և շահագործման պայմաններ՝ -30 °C-ից մինչև +60 °C (-22 °F-ից մինչև +140 °F), խոնավությունը՝ 95% կամ ավելի ցածր (առանց կոնդենսացիայի) (Startup And Operating Conditions: -30 °C to +60 °C (-22 °F to +140 °F), humidity 95% or less (non-condensing))

7. Էլեկտրասնուցումը 12 VDC ± 25%, 5.5 մմ կոաքսիալ հոսանքի վարդակից, PoE (802.3af, class 3) (Power Supply: 12 VDC ± 25%, 5.5 mm coaxial power plug, PoE (802.3af, class 3)):

2. Նյութերի լաբորատոր փորձարկումներն իրականացվելու են Կապալառուի կողմից: Խորհրդատուն, Պատվիրատուի գրավոր հանձնարարությամբ, պետք է կատարի որոշ պատրաստի շինվածքների և տվյալ շինարարությունում օգտագործվող շինանյութերի փորձարկումներ: Այս աշխատանքների իրականացման համար Խորհրդատուն պետք է ունենա համապատասխան տեխնիկական միջոցներ կամ պայմանագիր՝ նմանատիպ աշխատանքներ կատարող արտոնագրված կազմակերպության հետ: Բոլոր փորձարկումները պետք է իրականացվեն ՀՀ գործող նորմերի համապատասխան: Լաբորատոր փորձարկումների հետ կապված ծախսերը պետք է ներառվեն Խորհրդատուի գնային առաջարկում՝ որպես փոխհատուցվող ծախսեր : Նախատեսվող փորձարկումների նախնական ցանկը ներկայացված է ստորև.

Փորձարկման տեսակը	Չափման միավոր	Նախնական քանակ	Միավորի գին (դրամ)	Արժեք (դրամ)
Կոնստրուկտիվ տարրերի բետոնի ամրության ստուգում ոչ քայքայող եղանակով Schmidt hammer սկլեռոմետրի միջոցով	տարր	30		
Բետոնե և երկաթբետոնե տարրերի ամրության և խտության ստուգում քայքայող եղանակով /kerH/	հատ	18		
Բետոնե և երկաթբետոնե պատրաստվածքների ամրության ստուգում / եզրաքարեր, սալեր և այլն/ ոչ քայքայող եղանակով Schmidt hammer սկլեռոմետրի միջոցով	հատ	14		
Ամրանների ֆիզիկամեխանիկական հատկությունների ստուգում	նմուշ	14		
Եռակցման կարերի որակի ստուգում ֆիզիկական մեթոդով /ուլտրաձայնային/	մ	50		
Ասֆալտբետոնե ծածկույթի ամրության և խտության ստուգում /kerH/	հատ	8		
Տոփանած գրունտի խտության ստուգում	նմուշ	10		

Բացի աղյուսակում ներկայացված փորձարկումներից, շինարարության ընթացքում այլ փորձարկումների կամ ստուգումների կատարման անհրաժեշտության առաջացման դեպքում, այդ աշխատանքների միավոր արժեքը կվորոշվի Խորհրդատուի հետ լրացուցիչ բանակցությունների արդյունքում՝ շուկայական գների սահմաններում:

Իրականացված փորձարկումների փաստացի վճարումը կկատարվի ելնելով Պատվիրատուի կողմից հանձնարարված փորձարկումների տեսակից և քանակից, Խորհրդատուի կողմից փորձարկումների վերջնական արդյունքների ներկայացումից հետո և կվճարվի

ստուգումների համար նախատեսված գումարի շրջանակներում՝ հերթական ամսեկան կատարողականի հետ համատեղ:
Իրականացված փորձարկումների և ստուգումների արդյունքների հավաստիության համար պատասխանատու է Խորհրդատուն:

3. Եթե կատարված շինարարական աշխատանքներում կամ շինարարության կազմակերպման գործընթացներում, այդ թվում բնապահպանական, Պատվիրատուի մասնագետները կամ այլ շահագրգիռ կողմերը հայտնաբերեն թերություններ կամ նախագծից շեղումներով կատարված աշխատանքներ, որոնք ժամանակին չեն նկատվել Խորհրդատուի կողմից և ընդգրկվել են իր կողմից ներկայացված վճարման ենթակա աշխատանքների ցանկում, կամ ներկայացած աշխատանքների վճարման ենթակա ծավալները չհամապատասխանեն այդ պահին փաստացի կատարված ծավալներին, ապա Խորհրդատուի ցանկացած հաջորդ կատարողականից, որպես տույժ, կպահվի այդ կատարողականի գումարի 10%-ը:

4.

3. ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 ԾՐԱԳՐԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Շինհրապարակում տեղակայվելուց անմիջապես հետո Խորհրդատուն պետք է պատրաստի և Պատվիրատուին ներկայացնի Ծրագրի Սկզբնական Հաշվետվություն (ԾՍՀ): ԾՍՀ-ը պետք է ներառի նախագծային ամբողջական փաթեթի, այն է՝ ճարտարապետական և ինժեներական նախագծերի և մասնագրերի գնահատում, ինչպես նաև նախագծի իրականացմանն առնչվող այլ ասպեկտներ, այն է՝ տեղանքի պայմաններ և ծրագրի ավարտման ժամկետներ: ԾՍՀ-ը պետք է արտացոլի Խորհրդատուի կողմից հայտնաբերված բոլոր խնդիրները, որոնք կարող են խնդիր հանդիսանալ ծրագրի իրականացման ընթացքում, և առաջարկի դրանց լուծման պրոակտիվ ուղիներ:

ԾՍՀ-ը պետք է ներկայացվի Պատվիրատուին՝ վերջինիս մեկնաբանություններն և/կամ հաստատումը ստանալու, ոչ ուշ քան Խորհրդատուի՝ շինհրապարակում տեղակայվելու օրվանից երկու (2) շաբաթ հետո: ԾՍՀ-ը պետք է ներկայացվի Հայերեն լեզվով էլեկտրոնային և թղթային տարբերակով՝ 2 (երկու) օրինակից:

3.2 ԱՄՍԱԿԱՆ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Խորհրդատուն պետք է Պատվիրատուին ներկայացնի Ամսական Ամփոփ Հաշվետվություն (ԱԱՀ), որում կարտացոլվեն հաշվետու ամսվա ընթացքում իրականացված բոլոր շինարարական աշխատանքները և այլ միջոցառումները:

ԱԱՀ-ը պետք է ներառի ամփոփ տեղեկատվություն շինարարության առաջընթացի, ծախսերի, հայտնաբերված խնդիրների և դրանց լուծումների, կազմված թաքնված աշխատանքների և փորձարկումների ակտերի, ինչպես նաև կապալառուի կողմից կատարված աշխատանքների գնահատման վերաբերյալ: ԱԱՀ-ում պետք է արտացոլվեն նաև հեղինակային հսկողության ընթացքում արձանագրված շեղումները և դրանց վերացման մասին գրառումները, նախագծանախահաշվային փաթեթներից (ՆՆՓ) շեղումները, եթե դրանք առկա են, ՆՆՓ-երում կատարված փոփոխությունները, ներկայացված ապրանքների որակի համապատասխանության սերտիֆիկատները, կատարված լաբորատոր փորձարկումների աղյուսակը և դրանց արդյունքները, ինչպես նաև մասնագիտական եզրակացություն լաբորատոր փորձարկումների արդյունքների մասին, լուսանկարներ և այլն: Ընդ որում, հաշվետվության մեջ գրառումները պետք է կատարեն

բոլոր այն տեխնիկական հսկիչները՝ համաձայն նախորոք հաստատված ցանկի, ովքեր պատասխանատու են շինարարության համապատասխան ոլորտում կատարված աշխատանքների համար՝ բնակելի, հասարակական և արտադրական, հիդրոտեխնիկական, էներգո, գազամատակարարման և կապի և ցանցի՝ վավերացնելով հաշվետվության համապատասխան բաժինը: Հաշվետվությանը պետք է կցված լինի համապատասխան մասնագետների կատարած այցելությունների կամ մշտական ներկայությունն արձանագրող աղյուսակ, դրույքաչափերով և վարձատրությունների չափով: Հաշվետվությանը կկցվեն նաև Շինարարության Գրանցամատյանի գրառումները և Շինհրապարակային Հանդիպումների արձանագրությունները: Հաշվետվությունը պետք է ներառի շինարարական աշխատանքների առաջընթացի և աշխատանքային գրաֆիկների ու պայմանագրային ժամկետների համապատասխանության գնահատում: Հաշվետվություններում արտացոլված ամբողջ տեղեկատվությունը և տվյալները պետք է ստուգվեն Պատվիրատուի կողմից:

3.2.1 Շինարարության Գրանցամատյան

Կապալառուն պատրաստում և վարում է Շինարարության Գրանցամատյանը (ՇԳՄ), որտեղ յուրաքանչյուր օր գրանցվում են շինհրապարակում կատարվող բոլոր գործողությունները: Շինարարության Գրանցամատյանի գրառումները վերահսկվում են ՇՏՀ կողմից: Բացի այդ, գրանցամատյանում գրառումներ պետք է կատարվեն նաև տեխնիկական հսկիչների կողմից, որոնք այցելում են շինհրապարակ՝ իրենց տեխնիկական մասնագիտացման շրջանակներում որոշակի շինարարական աշխատանքներ ստուգելու համար:

3.2.2 Հանդիպումներ շինհրապարակում

Ծրագրի իրականացման ողջ ընթացքում շինհրապարակում պարբերաբար պետք է տեղի ունենան հանդիպումներ: Շինհրապարակում հանդիպումները պետք է վարի ՇՏՀ-ը, ով պատասխանատու է հանդիպման օրակարգի (անհրաժեշտության դեպքում) նախապատրաստման համար: Շինհրապարակում հանդիպումների մասնակիցները պետք է լինեն Պատվիրատուի, Խորհրդատուի, նախագծողի (հեղինակային հսկողություն իրականացնող), կապալառուի ու ենթակապալառուների (եթե առկա են) լիազոր ներկայացուցիչները, որոնք նախորդ շաբաթվա ընթացքում աշխատել են ծրագրի իրականացման վրա, կամ աշխատելու են հաջորդ շաբաթվա ընթացքում: Բացի այդ, շինհրապարակի հանդիպումներին պետք է մասնակցեն նաև ընթացիկ աշխատանքներին առնչվող տեխնիկական հսկիչները:

Շինհրապարակում հանդիպումների օրակարգը (առկայության դեպքում).

Շինհրապարակում յուրաքանչյուր հանդիպման օրակարգը պետք է ներառի (որը չի սահմանափակվում)

- մասնակիցների ցանկ,
- նախորդ հանդիպման արձանագրության հաստատում,
- նախորդ հանդիպման ժամանակ արձանագրված և քննարկված խնդիրների լուծման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ,
- ընթացիկ հանդիպման ժամանակ արձանագրված և քննարկված խնդիրներ,
- աշխատանքների առաջընթացը,
- այլ հարցեր:

Շինհրապարակում հանդիպումների վարման կարգը.

Շինհրապարակում յուրաքանչյուր հանդիպման ընթացքում քննարկվելիք հարցերը պետք է ներառեն (որը չի սահմանափակվում)՝

- նախորդ հանդիպումների արձանագրությունների հաստատում (առկայության դեպքում),
- ընթացիկ աշխատանքները և առաջընթացը՝ աշխատանքային պլանի համեմատ,
- շինհրապարակում առկա աշխատուժը՝ քանակը և կազմը,
- մատակարարված շինանյութերը՝ վկայագրերը և դրանց հաստատման կարգավիճակը,
- լաբորատոր պայմաններում և շինհրապարակում անցկացված փորձարկումները՝ փաստաթղթավորված արդյունքները և դրանց հաստատման կարգավիճակը,
- մասնագետների կողմից իրականացված աշխատանքների ստուգումները՝ արձանագրված արդյունքները և դրանց հաստատման կարգավիճակը,
- կատարված աշխատանքների համար վճարումները՝ համապատասխան փաստաթղթերը և դրանց հաստատման կարգավիճակը,
- իրականացվելիք աշխատանքները՝ արձանագրված խնդիրները և պահանջվող լուծումները,
- բնապահպանական միջոցառումները՝ արձանագրված խնդիրները և պահանջվող լուծումները,
- աշխատանքային անվտանգության ապահովման միջոցառումները՝ արձանագրված խնդիրները և պահանջվող լուծումները,
- այլ հարցեր:

ՇՏՀ-ը պետք է կազմի հանդիպման արձանագրությունը (անհրաժեշտության դեպքում)՝ ներկայացնելով հանդիպման յուրաքանչյուր մասնակցին մեկնաբանությունների և/կամ հաստատման համար:

Ծառայությունները մատուցելու ողջ ընթացքում Խորհրդատուն պետք է ներկայացնի Ամսական Ամփոփ Հաշվետվություններ Պատվիրատուին՝ վերջինիս մեկնաբանություններն և/կամ հաստատումը ստանալու համար: Ամսական Ամփոփ Հաշվետվությունները պետք է ներկայացվեն Հայերեն լեզվով էլեկտրոնային և թղթային տարբերակով՝ 2 (երկու) օրինակից՝ հաջորդող ամսվա առաջին շաբաթվա ընթացքում:

3.3 ԾՐԱԳՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից անմիջապես հետո Խորհրդատուն պետք է օժանդակի Պատվիրատուին՝ աշխատանքները կապալառուից ընդունելու գործում: Այնուհետև, Խորհրդատուն Պատվիրատուին պետք է օժանդակի ավարտական ակտերի կազմման և պայմանագրի ավարտի գործընթացին: Ծրագրի Ավարտական Հաշվետվությունը (ԾԱՀ) պետք է ներառի (որը սակայն չի սահմանափակվում) ճարտարապետական/ինժեներական նախագծերի, մասնագրերի ու ծավալների, փոփոխված պատվերների, փոփոխությունների ու լրացումների ցանկը, ինչպես նաև ծրագրի իրականացման ողջ ընթացքի ամփոփ նկարագիրը: ԾԱՀ-ին պետք է կցվի Թերությունների Ցանկ, որում կնշվի(են) թերությունների վերացման միջոցառումները և ավարտման ժամկետները: ԾԱՀ-ը պետք է ստորագրվի Խորհրդատվական Խմբի Ղեկավարի, ՇՏՀ-ի և

բոլոր համապատասխան տեխնիկական փորձագետների կողմից, ովքեր ներգրավված են եղել ծրագրի իրականացման մեջ:

ԾԱՀ-ը պետք է ներկայացվի Պատվիրատուին՝ վերջինիս մեկնաբանություններն և/կամ հաստատումը ստանալու, շինարարական աշխատանքների ավարտից տաս (10) օր հետո: ԾԱՀ-ը պետք է ներկայացվի Հայերեն լեզվով էլեկտրոնային և թղթային տարբերակով՝ 2 (երկու) օրինակից:

3. ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ

Կազմակերպության աշխատակազմում պետք է ընդգրկված լինեն հետևյալ անհրաժեշտ մասնագետները, որոնք պետք է ունենան համապատասխան որակավորում՝ տրված ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի լիցենզավորման մարմնի կողմից՝ համաձայն սահմանված կարգի: Մասնագետների կազմն՝ ըստ օբյեկտների, ներկայացվում է Հավելված 1-ում:

Խմբի ղեկավար - ճարտարագետ- Պետք է ունենա բարձրագույն կրթություն շինարարության ոլորտում, 7 տարվա աշխատանքային փորձ, ցանկալի է առողջապահական հաստատությունների շինարարության տեխնիկական հսկողության մասով:

Խմբի ղեկավարը պետք է համակարգի իր բոլոր մասնագետների աշխատանքները, ապահովվի հաշվետվությունների ընթացքը, տա հանձնարարականներ իր ենթամասնագետներին և մշտական կապ հաստատի Պատվիրատուի հետ:

Ճարտարագետ-կոնստրուկտոր- Պետք է ունենա բարձրագույն կրթություն ԱՔՇ ոլորտի, ունենա 7 տարվա աշխատանքային փորձ և 3 տարվա համապատասխան բնագավառում, ունենա համապատասխան որակավորում բնակելի, հասարակական և արտադրական ոլորտի շինարարությունների տեխնիկական հսկողության՝ տրված ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի լիցենզավորման մարմնի կողմից՝ համաձայն սահմանված կարգի:

Շինհրապարակի Տեխնիկական Հսկիչ- Պետք է ունենա բարձրագույն կրթություն շինարարության ոլորտում, առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ (վերջին տարիների ընթացքում) բնակելի, հասարակական և արտադրական շինարարությունների տեխնիկական հսկողության մասով:

Բնապահպանության և սոցիալական հարցերի մասնագետ- Պետք է բարձրագույն կրթություն համապատասխան ոլորտում, առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ (վերջին տարիների ընթացքում) միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող ծրագրերում:

Օժանդակ մասնագետներ, տեխնիկական հսկիչներ

1. Էներգետիկ
2. Կապի մասնագետ
3. Ջրամատակարարման և կոյուղու մասնագետ
4. Գազամատակարարման, ջերմատեխնիկայի և օդափոխության մասնագետ

Համաձայն համապատասխան ոլորտների, Խորհրդատուն պարտավոր է ապահովել տեխնիկական հսկիչներով, որոնք պետք է ունենան բարձրագույն կրթություն

էներգետիկայի, կապի, հիդրոտեխնիկայի, գազամատակարարման, ջեռուցման և օդափոխության ոլորտներում: Օժանդակ մասնագետները պետք է ունենան 5 տարվա աշխատանքնային փորձ տեխնիկական հսկողության ոլորտում և 3 տարվա աշխատանքնային փորձ համապատասխան բնագավառում:

Վերջիններս՝ ըստ անհրաժեշտության, պետք է կատարեն այցելություններ շինհրապարակներ, կատարեն հսկիչ չափագրումներ, ստուգեն տեղադրված նյութերի համապատասխանությունը նախագծին և ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական պահանջներին, մասնակցեն փորձարկումներին, ձևակերպեն իրենց չափաբաժինների կատարողական ակտերը և ստուգեն թաքնված աշխատանքների ակտերը, ներկայացնեն ամսական հաշվետվություններ թիմի ղեկավարին:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Օբյեկտների ցանկն ըստ պահանջվող մասնագետների և ներկայության ապահովման

ՕԲՅԵԿՏ #	ՄԱՐԶ	ՕԲՅԵԿՏԻ ԱՆՈՒՆԸ և ՀԱԿԻՐՃ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽ.ՀՍԿԻՉ ամենօրյա ներկայությամբ՝ 8 ժամ	ՕԺԱՆԴԱԿ ՏԵԽ.ՀՍԿԻՉ
1	ՀՀ Վայոց Ձորի մարզ	ՀՀ Վայոց Ձորի մարզային հիվանդանոցի նոր շենքի՝ 3800 քմ, նոր կաթասայատան և ենթակայանի կառուցում և տարածքի բարեկարգում	Բնակելի, հասարակական և արտադրական	1.Էներգետիկ, 2.Կապի, 3.Ջրամատակարարման և կոյուղու, 4.Գազամատակարարման, ջերմատեխնիկայի և օդափոխության մասնագետ,